ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 22. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որպեսզի Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ իրավաբանական անձինք օգտվեն բոլոր այն իրավունքներից, որոնք տրվում են նրանց նստավայր պետության օրենսդրությամբ եւ այն միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցներն են Հայաստանի Հանրապետությունը եւ նստավայր պետությունը, ինչպես նաեւ միջազգային նորմերով եւ սովորույթներով:

Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը պարտավոր է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիներից ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր դիմումներ, օրենքով սահմանված կարգով ընդունել և քննարկել ներկայացված հանրագրերը: